

ք. Երևան

«07» օգոստոս 2009 թ

«Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունը (ստորև՝ «Ընկերություն»), ի դեմս գլխավոր տնօրեն Ռաֆ Զիրիկյանի, որը գործում է համաձայն Ընկերության կանոնադրության, մի կողմից, և Գավառի պետական համալսարանը (ստորև՝ «ԲՈւՀ»), ի դեմս ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի մյուս կողմից (միասին «Կողմեր») կազմեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

ա) համատեղ ուժերով նպաստել հանրապետության կրթական համակարգի զարգացման գործընթացին;

բ) երիտասարդ մասնագետների համար ստեղծել նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման հնարավորություններ;

գ) հաստատել փոխշահավետ, բազմաբնույթ համագործակցային հարաբերություններ:

Հուշագրի շրջանակներում իրականացվելու է գործունեություն հետևյալ ուղղություններով՝

- ԲՈւՀ-ի ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկայի անցկացում Ընկերությունում:
- Մասնագիտական առարկաների համատեղ դասավանդման կազմակերպում Ընկերության աշխատակիցների ներգրավմամբ:
- Համատեղ գիտահետազոտական աշխատանքների և աշխատանքային ծրագրերի իրականացում:
- Ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման հարցում Ընկերության աշխատակիցների ներգրավում:
- Գիտամանկավարժական գործունեության արդյունքների համատեղ քննարկում և գնահատում:

1. ԲՈւՀ-ը՝

1.1 Տրամադրում է ուսանողական պրակտիկայի տարեկան պլանը և համաձայնեցնում ժամանակացույցը Ընկերության հետ:

1.2 Ընտրում է ԲՈւՀ-ի լավագույն ուսանողներին պրակտիկայի անցկացման համար՝ համաձայն Ընկերության կողմից ներկայացված մասնագիտությունների և տեղերի:

1.3 Ապահովում է ուսանողների պարտաճանաչ հաճախումը ըստ նախօրոք համաձայնեցված ժամանակացույցի:

1.4 Ընդգրկում է Ընկերության կողմից առաջադրված թեմաները ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներում:

1.5 Ընկերության պահանջով ներկայացնում է ուսանողների առաջադիմությանը վերաբերող տեղեկատվություն:

1.6 Ընկերության կողմից առաջադրվող դասավանդման թեմաները քննարկում և ընդգրկում է ուսումնական գործընթացի մեջ:

1.7 Առաջադրված դասախոսությունների ժամանակացույցը համաձայնեցնում է Ընկերության հետ:

1.8 Ապահովում է Ընկերության կողմից առաջադրված դասախոսական կազմի համար դասախոսությունների համար անհրաժեշտ պայմանները:

1.9 Համատեղ աշխատանքային ծրագրերի և գիտահետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում ապահովում է ԲՈւՀ-ի կողմից ղեկավարի ներգրավվածությունը:

1.10 Ուսանողների և համապատասխան դասախոսական կազմի համար ստեղծում է անհրաժեշտ պայմաններ Ընկերության առաջարկով կատարվող ծրագրերի արդյունավետ իրականացման համար:

1.11 Կազմակերպում է գիտական և աշխատանքային հանդիպումներ (ճիստեր) համատեղ քննարկումների իրականացման և հետագա համագործակցության նպատակով:

2. Ընկերությունը`

2.1 Տրամադրում է պրակտիկայի մասնագիտությունների տեղերի և ժամանակացույցի պլանը` կիսամյակային կտրվածքով:

2.2 Ներկայացնում է Ընկերության կողմից սահմանված պրակտիկանտներին առաջադրվող որակավորման պահանջները:

2.3 Նշանակում է պրակտիկայի ղեկավար յուրաքանչյուր պրակտիկանտի համար:

2.4 Սահմանում է առաջադրանքներ պրակտիկանտների համար և հետևում է դրանց իրականացմանը:

2.5 Ուսանողներին տրամադրում է առևտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկատվություն, ինչը անհրաժեշտ է ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքի համար:

2.6 Տրամադրում է պրակտիկայի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

2.7 Ապահովում է պրակտիկանտների զբաղվածությունը պրակտիկայի ընթացքում:

2.8 Ուսումնա-պրակտիկական գործընթացի կազմակերպման համար ներգրավում է բարձր որակավորմամբ կադրեր:

2.9 Մշակում է ուսումնական նյութեր և կազմակերպում դասընթացներ համաձայն համատեղ մշակված պլանի:

2.10 Ապահովում է Ընկերության աշխատակիցների կողմից մատուցվող դասընթացների բարձր որակը:

2.11 Գնահատում է վերոնշյալ դասընթացների ընթացքը և արդյունավետությունը:

2.12 Առաջարկում է Ընկերությանը հետաքրքրող թեմաներ համատեղ աշխատանքային ծրագրերի և գիտահետազոտական աշխատանքների համար:

2.13 Մասնակցում է ուսանողների դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարմանը:

2.14 Դեկավարում է համատեղ ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացը:

2.15 Մասնակցում է գիտական և աշխատանքային հանդիպումներին (Գիտերին) համատեղ քննարկումների իրականացման և հետագա համագործակցության նպատակով:

3. Այլ պայմաններ

3.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրման պահից եւ կողմերի համար կրում է դեկլարատիվ բնույթ:

3.2. Հուշագրի հիման վրա եւ դրա պայմաններին համապատասխան ու համաձայն Կողմերը կարող են կնքել Պայմանագիր, որը կարող է մախսատեսել Հուշագրում նշված պայմաններին ու պահանջներին չհակասող այլ պայմաններ:

3.3. Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր, Կողմերի համաձայնությամբ:

3.4. Կողմերի հասցեները և վավերապայմանները

Ընկերություն

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան, Արգիշտի 4/1

Հեռ. 568777
Ֆաքս. 569222
Գլխավոր տնօրեն՝
Ռալֆ Յիրիկյան



ստորագրություն



«07» օգոստոս 2009 թ.

ԲՈՒՀ

Գավառի պետական համալսարան
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
Ազատության 1
Հեռ. 282075
Ֆաքս. 282075
Ռեկտոր՝
Ռուզաննա Հակոբյան



«07» օգոստոս 2009 թ.